



46. ԱՐԴՄԱՆԻՆ ՆԱՆ ՉՈԲԱՆԸ

Լողմանին մին շատ պեն գյիգող, հարուստ մարթ ա ինո՞ւմ։
Տա ծառայությունան տոն ար կյամ լիզյը պեռնավ ու շամադանավ։ Հղեննի մին ծի յա քրե՛ռում, շամադաննեն քցում ծիլին լիրա, ինքյն էլ ծին նստում, հղե ինում բիդի տոն։ Ուրան նհրետ ծիլին տարը կյամ առ Շատ ա կյամ, թա խրեգյ, տըսենում ըն, վըեր տավարը հղեցը զրադեն ըրածում ըն, իսկ չըրանը մին զրադ տըսեղ թեյն ա տուվալ, կըվուսներեն ա թիմաշա անում։ Լողմանին հղցեն երե զոլին ըրածող մին կուվու եշում ա, ծիժադում։ Սիլատարը գյուղում ա, թա ուրան յիրա յա ծիժադում, լողմանում ասում ա.—Տու իմ ծիս նստալ ըս, տոն ըս քյինամ, ես էլ քու հետատ փըյադա կյաժ ըմ, հալա ինձյիրա յէլ ծիժադում ը՞ս, ծիլաս վըեր եք, տես-տենըտ վըեր ածե, քրե՛ռտ էլ ինձ հարկավըեր չի, ես ես ըմ տընոնում։

Լողմանին տըսենում ա, վըեր ծիյատարն իսկապես կղնըվալ ա, ասում ա.—Քըզյիրա լըմ ծիժադում, էն կուվըեն յիրա լըմ ծիժադում, մին սհաթան ետը ծըննական ա, դանան էլ ուրան մնան ա իննարկան, ճակատը սիպտակի Զորանը մուտանում ա, ասում։—Տու դուզ լըս ասում, դանան ուրան հորը մնան ա. իննական։ Հարցյին սիպտակի, դուզ ըսեցեր, վըեր կովը մին սհաթան ետը պիտի ծնե, զնեն ճակատը չի սիպտակի, հաքյին ա սիպտակ՝ ծալած, տիրած ճըկատեն։

Իսի վըեր շատ հնչաթ ըն տամ, լողմանին նան շոբանը շարթ
ըն կյամ, լողմանին ասում ա.—Կովը մորթենք, թա գանան իմ
ասած իլավ, տու ինձ իրեք հազզար մանեթ փող տաս, իսկ վըեր
քու ասածն ինի, ես քեզ իրեք հազզար մանեթ տամ, կովն էլ
հալա քեզ ըխշադանք, մըեսը նան կաշին ծախս, հինչ օգում ըս
ըրա, հալա մին պեն էլ քեզ խալաթ կանեմ:

Չոբանը դարու ա անում, կովը մորթում ըն, տըեսնում դա-
նան մորը փորումը հաքյին ծալած, ճըկատն տիրած, զընեն ճա-
կատը սիպտակ լի, հաքյին ա սիպտակ: Լողմանին մնամ ա զար-
մացած, ասում ա.—Ես շատ կարթած, ախշարք տըեսած մարթ
ըմ, պենան տուս ա կյամ, վըեր տու ինձանա յէլ ըս շատ գյու-
ղում, էտ հունց ա, վըեր տու շորան մարթ, ես՝ լողմանի, տու
գյիգացեր, ես՝ լի: Չորանն ասում ա.—Պենան տուս ա կյամ, վըեր
ես քըզանա շատ ըմ գյուղում, էն վախտը, վըեր ես ու տու մորա
իլալ ընք, մին պարի սհաթ ա իլալ, մին իմաստուն սհաթ, ամմա
տու ինիլիս վախտը վըեխճարն ո՛ւրան տիմակն ա լծիզ տուվալ, իմ
ինիլիս վախտը վըեխճարն ո՛ւրան վըեննավը ո՛ւրան պողն ա քո-
րալ, իմ փայըս վըեսկում ա ինգլալ, քունը՝ տիմակը նան եղը,
տրա հետե յէլ ես շըրշըրվելավ, քլասիր պիտի ապրեմ, տու՝ համ
դինչ, համ հարուստ:

Լողմանին շուրանին իրեք հազզար մընեթան կըման տուս ա
օնում մին քսակ վըեսկե յէլ տամ, էլլա ո՛ւրան հըեննամ

